մնացորդ է, պատկերել ենք գրչագրի նկարչական գեղեցկութիւնները։

Գ) Յ. Քիւրտեանը «Բազմավէպ»ում չօշափել է նաեւ հետեւեալ կէտը. «իր հրատարակած յիշատակարանների քանի մը քաղուածներն իսկ սխալաշատ են, համեմատելով Աճառեանի հրատարակութեան հետ» գրում է նա։

Վրիպակներն իսկական ձեռագրի հետ բաբեխղճութեամբ համեմատելուց յետոյ միայն հնարաւոր է սխալների մասին կարծիք յայտնել, թէ այդ վրիպակները գրաշարի՞ն, թէ յօդուածագրին պիտի վերագրել։ Դեռ 1939 թուին «Անահիտ»ում Յ. Քիւրտեանի հրատարակած Իգնատիոս նկարչի յիշատակարաններում նկատեցինք սխալաշատ տողեր և իր ժամանակին մամուլում սրբագրեցինք, բայց ոչ թէ Քիւրտեանի նման տպագրի վրայ հիմնւելով, այլ իսկական ձեռագրի հետ հաւեմատելով։ Այդ է պահանջում գիտական բանասիրութիւնը։

Դ) Յ. Քիւրտեանը իր «Ճշտումներ»ում յայտնել է նաեւ թէ ձեռագրի մանրանկարիչն է Մկրտիչ դպիրը, ոչ թէ Աստուածատուր։ Իր կարծիքը հաստատելու համար նա առաջ է բերել հետեւեալ յիշատակարանը. «... ի ծաղկել աւետարանիս... զտրուպ Մկրտիչ գպիրս», առանց, սակայն, նշելու, թէ այդ յիշատակարանը գրչագրում գրած է տարբեր և այն էլ ո՛չ գեղեցիկ ձեռագրով։ Այնուհետեւ Յ. Քիւրտեանն աւելի խորացնելով իր կարծիքը, իրեն թոյլ է տուել գրելու այսպիսի տողեր. «Երեմեանը նոյնիսկ չի հասկցել յիշատակարանի իմաստը». Քիւրտեանի այդ մօտեցումը պիտի վերագրել չարախօսութեան։ Այդ տողերի անճշտութիւնը հաստատում են դեռ 1947 թուին «Անահիտ»ում մեր ստորագրած յօդուածի հետեւեալ ցայտուն տողերը. «Գրչագրում հանդէս են գալիս երկու նկարիչներ, երկու տարբեր վրձիններ։ Եթէ գլխաւոր նկարիչը համարել ենք սարկաւագ Աստուածատուրը, պարզ է, որ միւսն է Մկրտիչ դպիրը։

Սակայն, ինչ է պատճառը, որ առանձնապէս կանգ ենք առել սարկաւագ Աստուածատուրի վրայ։ Այդ հանգամանքը պարզում են ամենից առաջ ձեռագրի 82-րդ էջի յիշատակարանի հետեւեալ տողերը. «Զմեզազարդ գծող սարկաւագ Աստուածատուրս յիշեցէք ի Քրիստոս»։

Քիւրտեանը լռութեամբ է անցել այս կարեւոր յիշատակարանի վրայից, որը պարզ պատկերում է այն նկարչի կերպարը, որն եղել է իր ժամանակի նկարչական արուեստի գլխաւոր կենտրոններից մէկում Հալէպում, ուր խորացել է գրչագրութեան ու նկարչական արուեստի մէջ և գրել է ոչ միայն Աւետարանը, այլ և գծել է (նկարել է) ձեռագրի գեղեցիկ նկարները։ Արդարեւ գրչագրի գրաֆիկ գեղանկարները և ոսկեզօծ նուրբ, քնքուշ ոճերով վրձինուած զարդանկարները, որոնք գրաւիչ են իրենց վառ, կենդանի ու պայծառ գոյներով, հմուտ ու ձեւակերպուած նկարչի ստեղծագործութիւններ են։

Կայ մի այլ կարեւոր հանգամանք։ Ձեռագրի 82-րդ էջի սարկաւագ Աստուածատուրին նուիրուած յիշատակարանը գրուած է այն գեղեցիկ տառերով, որոնք իշխում են գրչագիր աւետարանում։ Անժխտելի է, որ վարպետ նկարիչը միայն կարող է ունենալ գեղեցիկ ձեռագիր, ինչպէս Աստուածատուր սարկաւագն է։ Ընդհակառակը, ձեռագրի 128-րդ էջի Մկրտիչ Դպիրին վերաբերող յիշատակարանը. «... ի ծաղկել աւետարանիս զտրուպ Մկրտիչ դպիրս...», գրուած է տարբեր և անճաշակ ձեռագրով։ Այդ հանգամանքն էլ վկայում է, որ Մկրտիչ Դպիրը՝ Աստուածատուր սարկաւագի նման ոչ գեղեցիկ ձեռագիր է ունեցել և ոչ էլ նրա նկարչական հմուտ վրձինը։ Ահա թէ ինչու ձեռագրում Մկրտիչ Դպիրի ծաղկած մանրանկարները թոյլ ստեղծագործութիւններ են, զուրկ ուրոյն արժէքից։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Թէհրան, 7 Ապրիլ 1949

Ա. ՄԱՇՏՈՑԸ

(ծ. թիւ՝ 457)

Պարզապէս ճշգրտու համար հարկ կը տեսնեմ յայտարարել, թէ՝ մեր Հ. Վահան վարդապետին մեկնելուն, «Մեղք ըսի, չկրցար իմ բանախօսութեանս մնալ. մեր Ա. մաշտոցին վրայ գրած եմ և կը ցուցնեմ թէ Էջմիածնի ձեռագիրներէն աւելի հին է, Մոսկովայի և Մլքէի[1] աւետարանէն թէ ոչ հնագոյն՝ զէթ հաւասար է»։ Իմ այդ խօսքս քիչ մը տարբեր արձագանգ գտած է ազգային մամուլի կողմանէ, (Մասիս՝ 15 Դեկտ. 1948, էջ 7, սս. 1։ Յառաջ՝ 18 Յունուար 1949, էջ 3, սս. 1։ Ապագայ՝ 29 Յունուար 1949, էջ 3, սս. 3) եւն։ – Եւ իրօք ես ցուցած եմ հոն թէ խնդրական ձեռագիրը 885–886էն աւելի ուշ չի կրնար ըլլալ։ Զայդ կը ցուցնեմ նախ 1) Մասնագէտ բանասէրներու հեղինակութեամբ, 2) Ներքին և արտաքին քննութեամբ, 3) Ոճաբանութեան համառօտ և չատ նախնական կանոնէն, որուն վկայասիրի թարգմանած կամ յօրինածը ծանօթ չէ։ 4) Միւռոնօրհնէքի կանոնը՝ զոր զանց կ'ընէ արտագրել, վեհագոյն հրամանաց անհնազանդ չերեւնալու համար. և հայրապետական այդ արգելիչ տրամադրութիւնները՝ Օձնեցիէն (Է դր.)ի վեր կային։ – Կանխաւ ձեռագրովս զբաղած են նախ Հ. Մատ. Եսայեան, ապա Հ. Բ. Սարգիսեան (անտիպ). երկուքն ալ Թ–Ժ դարուն կը համարին զայն։ – Աստոնց հետեւելով, աւելի ընդարձակօրէն ուսումնասիրեց զայն Կոնիբեր իր Rituale Armenum-ով, ուր իր աշխատութեան իբր առանցք դրած է ձեռագիրս, և իր բոլոր ուշադրութիւնն՝ ասոր վրայ է կեդրոնացուցած։ Ինքը որ Ե–Ը դարու 1000ի չափ հին ձեռագիրներ քննած է ի Վաղարշապատ և այլուր, սակայն անոնցմէ ոչ մէկը, կ'ըսէ, հնութեան այնքան տպաւորութիւն կը թողու՝ որքան Վենետիկի Ա. մաշտոցը, իր ամէն տեսակէտով։ Ինքն ալ Թ–Ժ դարուն կը համարի զայդ, և (իրաւամբ) կը պնդէ թէ ուղղակի Մաշտոց վարդապետի կենդանութեան և անոր ազդեցութեան ներքեւ գրուած է։ Իսկ էջ 507ին մէջ, զայն ներքեւ գրուած է։ Իսկ էջ 507ին մէջ, զայն Ը դարուն կը դնէ, որ ճիշտ չէ։ – Անգղիացի Ը դարուն կը դնէ, որ ճիշտ չէ։ – Անգղիացի բանասէրին հրատարակութեամբ, մատեանս այսօր Թ դարուն ճանչցուած է։ – Բայց ասոնցմէ՝ լոկ ենթադրութիւն է, արտաքին վկայութիւն մը չունին։ Աւելի մանրամասնութեան իջնելով ես գրական փաստով մը պիտի ջանամ ճշգել և ստուգել մեր մաշտոցին թուականը։ – Հիմակ ձեռագիրը յիշատակարան չունի. բայց 3–400 տարի առաջ անշուշտ այսպէս չէր։ Միայն էջ 421ի մէջ, գրիչը գիպուածով մեզ կ'իմացնէ թէ ինքը «ԳԻՈՐԳ» երէց մ'է։ Այս անունը մեզի բաւական առաջ է գիրքը. քանի որ այդ թուականը ամենավերջին էջի մէջ է, անվարժ ձեռքի գործ է, և արդիազոյն ձեւերով։

(1) Հանդ. Ամս. 1943, էջ 23 եւն, կը ճգնի ցուցնել թէ Մլքէի մեր ձ. աւետարանը 932ին պէտք է գրուած ըլլայ և ոչ 902ին. որովհետեւ ՅԾԱ թուականը 32Ա կարդալու է։ Այդ բանը կ'ըսէ առանց ձեռագիրը տեսած ըլլալու։ Ուրախ ենք ըսելու որ այս գրքը մի միայն ՅԾԱ կարելի է կարդալ, և ուրիշ ո՛չ մի բան։ Բայց 902էն

ական լոյս պիտի տայ։ – Մեր ԽԳ լիակատար մաշտոցը, գրուած 1710ին, իր սեփական (էջ 777) յիշատակարանէն զատ, էջ 676՝ նախ ուրիշ մը կը դնէ, զայն հանդիսաւոր կերպով «Ցիշատակարան Գէորգեայ» կոչելով, որ ամենեւին կապ մը չունի ոչ իր գրչին (խաչատուրին) և ոչ իր դարուն հետ, այլ միջի անձինքն ու դէպքեր՝ ԽԳէն ինը դար առաջ են, (Սմբատ Բագրատունի, Աշոտ եւն.)։ – Ստեփանոս Սեւանեցւոյն Մաշտոց վարդապետի կենսագրութիւն մ'է, զոր ԽԳ չի վարանիր 2 անգամ «Ցիշատակարան Գէորգեայ» կնքել։ Ինչո՞ւ Գէորգ, և ոչ Խաչատուր կամ Ստեփանոս. ո՞վ է այդ Գէորգը։ Ինքն ալ Մաշտոցի ժամանակակից քահանայ մ'է որ անոր աշակերտին, Ստեփանոսի, գրած կենսագրութիւնն ուզած է օգտագործել՝ զայն իր ձեռագրին մէջ մուծելով։ Ապա թէ ոչ ինչո՞ւ այդ յիշատակարանը Գէորգի անուամբ պիտի դնէր։ – Կը համարիմ որ ԽԳ ուղղակի կամ անուղղակի, մեր Ա. մաշտոցէն օրինակուած է (որուն յատուկ կանոններն ալ ունի), երբ դեռ այն չէն էր, բնագրին յիշատակարանն ալ առած է՝ համառօտելով զայն։ Եւ որովհետեւ Ա. մաշտոցին գրիչը, տեսանք, Գէորգ (= Գիորգ) էր, որով զայն կոչեց «Ցիշատակարան Գէորգեայ։ Ուստի մեր Ա. մաշտոցի յիշատակարանը՝ բազմով անկորուստ պահուած է ԽԳին մէջ։

Ցիշատակարանը Մաշտոցին ոչ կաթուղիկոսութիւնը ոչ ալ մահը (897) կ'ակնարկէ, այլ միայն 893 տարին որուն մէջ հաւանաբար գրուած է այն։ Արդ, յիշատակարանն ընդհանրապէս ձեռագրաց վերջին էջերուն մէջ կ'ըլլայ. ուստի այդ ստուար հատորը պէտք է յիշատակարանէն 7–8 տարի մ'առաջ գրուած ըլլայ։ Աս հաշուով Ա. մաշտոցի գրութեան տարին, ամենէն ուշ 885–886ի կը հասնի. աս ոճով միայն կրնայ արդարանալ Կոնիբերի խօսքը, թէ Մաշտոց վարդապետին ներշնչման ներքեւ պէտք է գրուած ըլլայ։

Ենթադրութեանս կը նպաստեն և լիապէս կը հաստատեն զայն՝ թանկագին մատեանի հնութեան ամբողջ պարագաները։ Ցիշատակարանի այս անդրադարձութեանս վրայ էր ահա, որ բարեացակամ ընթերցողաց ուշադրութիւնն ուզած էին հրաւիրել, և չկարենալով առ այժմ բանախօսութիւնս ամբողջութեամբ հրատարակել, կը բաւականանամ ներկայ տեղեկութեամբս, յուսալով յարմար առթին ի լոյս ընծայել բովանդակը։

Հ. ԳՐ. Ս.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясникяна Ս. ՄԱՄՍԻԿՅԱՆԻ ՍԵՎԱՆ

digitised by A.R.A.R.@